ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
ԱՐԱԲԿԻՐ ՆՍՏԱՎԱՅՐ
(ՀՀ, համայնք ԵՐԵՎԱՆ, ՔԱՆԱՔԵՌ-ԶԵՅԹՈՒՆ, ՀՐ. ՆԵՐՍԻՍՅԱՆ Փ., մասնաշենք 10)

ՈՐՈՇՈՒՄ
ՀԱՅՑԱԴԻՄՈՒՄԸ ՎԱՐՈՒՅԹ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԵՎ ԱՊԱՑՈՒՅՑՆԵՐ ՊԱՀԱՆՋԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԵԴ2/7494/02/24 ք. Երևան
7 Հոկտեմբերի 2024թ

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը, նախագահությամբ դատավոր Ռ.Մ.Բունիաթյանի, ծանոթանալով «Զինտեքստիլ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հայցադիմումին ընդդեմ ՀՀ պետական պահպանության ծառայության, վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջ չներկայացնող երրորդ անձ ՀՀ ֆինանսների նախարարության՝ ՀՀ պետական պահպանության ծառայության և «Զինտեքստիլ» ՍՊ ընկերության միջև 05.02.2024 թվականին կնքված թիվ ՊՊԾ-ԷԱՃԱՊՁԲ-2024/3-1 պայմանագիրը ՀՀ պետական պահպանության ծառայության կողմից միակողմանի լուծելու արդյունքում ՀՀ պետական պահպանության պետի 18.07.2024 թվականի թիվ 36 հրամանը և հրամանի հետևանքով «Զինտեքստիլ» ՍՊ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելը ոչ իրավաչափ և անվավեր ճանաչելու պահանջի մասին,

ՊԱՐԶԵՑ

Աննա Կոտիկի Վանեցյանը 09.09.2024 թվականին էլեկտրոնային համակարգի միջոցով հայցադիմում է ներկայացրել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարան ընդդեմ ՀՀ պետական պահպանության ծառայության, վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջ չներկայացնող երրորդ անձ ՀՀ ֆինանսների նախարարության՝ ՀՀ պետական պահպանության ծառայության և «Զինտեքստիլ» ՍՊ ընկերության միջև 05.02.2024 թվականին կնքված թիվ ՊՊԾ-ԷԱՃԱՊՁԲ-2024/3-1 պայմանագիրը ՀՀ պետական պահպանության ծառայության կողմից միակողմանի լուծելու արդյունքում ՀՀ պետական պահպանության պետի 17.07.2024 թվականի թիվ 36 հրամանը և հրամանի հետևանքով «Զինտեքստիլ» ՍՊ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելը ոչ իրավաչափ և անվավեր ճանաչելու պահանջի մասին:
Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի 12.09.2024 թվականի որոշմամբ հայցադիմումը վերադարձվել է:
«Զինտեքստիլ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրեն Աննա Կոտիկի

Վանեցյանը 19.09.2024 թվականին կրկին էլեկտրոնային համակարգի միջոցով հայցադիմում է ներկայացրել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարան ընդդեմ ՀՀ պետական պահպանության ծառայության, վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջ չներկայացնող երրորդ անձ ՀՀ ֆինանսների նախարարության՝ ՀՀ պետական պահպանության ծառայության և «Զինտեքստիլ» ՍՊ ընկերության միջև 05.02.2024 թվականին կնքված թիվ ՊՊԾ-ԷԱՃԱՊՁԲ-2024/3-1 պայմանագիրը ՀՀ պետական պահպանության ծառայության կողմից միակողմանի լուծելու արդյունքում ՀՀ պետական պահպանության պետի 18.07.2024 թվականի թիվ 36 հրամանը և հրամանի հետևանքով «Զինտեքստիլ» ՍՊ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելը ոչ իրավաչափ և անվավեր ճանաչելու պահանջի մասին, որը 03.10.2024 թվականին մակագրվել է դատավոր Ռ. Բունիաթյանին:
ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.5-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների հետ կապված վեճերը քննվում և լուծվում են հայցադիմումը վարույթ ընդունելուց հետո՝ երեսուն օրվա ընթացքում: Դատարանի պատճառաբանված որոշմամբ սույն մասով նախատեսված ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ՝ մինչև տասն օրացուցային օրով:
ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը հայցադիմումը վարույթ ընդունելու հարցը լուծում է այն ներկայացվելուց հետո՝ եռօրյա ժամկետում:
Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հայցադիմումը վարույթ ընդունելու հետ միաժամանակ դատարանը կայացնում է որոշում՝ պատասխանողից տվյալ գնման գործընթացի հետ կապված պատասխանողի տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները պահանջելու մասին:
Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշումը կատարվում է պատասխանողի կողմից որոշումն ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում: Սույն մասով նախատեսված ժամկետում պատասխանողի կողմից ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշման պահանջները չկատարվելու դեպքում գործը քննվում է դրանում առկա ապացույցների հիման վրա, իսկ հայցվորի վկայակոչած այն փաստերը, որոնք ենթակա են հաստատման պատասխանողի տիրապետման տակ գտնվող ապացույցներով, համարվում են հաստատված:
ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ հայցադիմումը վարույթ ընդունելու մասին որոշումն անհապաղ ուղարկվում է «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված լիազորված մարմնի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեին (...):
«Գնումների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետի համաձայն՝ սույն օրենքում օգտագործվում են հետևյալ հիմնական հասկացությունները. լիազորված մարմին՝ պետական ֆինանսների կառավարման բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության քաղաքականությունը մշակող և իրականացնող՝ Հայաստանի Հանրապետության գործադիր իշխանության պետական մարմին:
Ուսումնասիրելով հայցադիմումը և դրան կից փաստաթղթերը՝ Դատարանը գտնում է, որ հայցադիմումը ներկայացվել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 121-122-րդ հոդվածներով նախատեսված պահանջների պահպանմամբ և առկա չեն հայցադիմումի ընդունումը մերժելու կամ այն վերադարձնելու հիմքեր:
ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.8-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գործին մասնակցող անձինք և նրանց ներկայացուցիչները դատական նիստի ժամանակի և վայրի, ինչպես նաև սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում առանձին դատավարական գործողություններ կատարելու մասին ծանուցվում են էլեկտրոնային հաղորդակցության միջոցով ծանուցագրերը և այլ փաստաթղթեր սույն օրենսգրքի 97-րդ հոդվածով սահմանված կարգով հայցադիմումում նշված էլեկտրոնային փոստին ուղարկելու եղանակով:
Նկատի ունենալով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.8-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված դատական ծանուցման կարգի վերաբերյալ նախատեսված առանձնահատկությունները և հաշվի առնելով գնումների հետ կապված վեճերը քննելու սեղմ դատավարական ժամկետները՝ դատարանը գտնում է, որ սույն գործով դատական ծանուցումներն անհրաժեշտ է իրականացնել էլեկտրոնային հաղորդակցության միջոցով՝ դատական ծանուցագրերն ու դատավարական փաստաթղթերն ուղարկելով հայցադիմումում նշված էլեկտրոնային փոստերին:
Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 124-րդ, 125-րդ, 234.9-րդ, 234.8-րդ, 188-րդ, 199-րդ, 200-րդ հոդվածներով՝ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. «Զինտեքստիլ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հայցադիմումն ընդդեմ ՀՀ պետական պահպանության ծառայության, վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջ չներկայացնող երրորդ անձ ՀՀ ֆինանսների նախարարության՝ ՀՀ պետական պահպանության ծառայության և «Զինտեքստիլ» ՍՊ ընկերության միջև 05.02.2024 թվականին կնքված թիվ ՊՊԾ-ԷԱՃԱՊՁԲ-2024/3-1 պայմանագիրը ՀՀ պետական պահպանության ծառայության կողմից միակողմանի լուծելու արդյունքում ՀՀ պետական պահպանության պետի 18.07.2024 թվականի թիվ 36 հրամանը և հրամանի հետևանքով «Զինտեքստիլ» ՍՊ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելը ոչ իրավաչափ և անվավեր ճանաչելու պահանջի մասին, ընդունել վարույթ և եզրափակիչ դատական ակտը հրապարակել 2024 թվականի հոկտեմբերի 31-ին՝ դատական իշխանության պաշտոնական կայքում:
2. Պատասխանող ՀՀ պետական պահպանության ծառայությունից պահանջել թիվ «ՊՊԾ-ԷԱՃԱՊՁԲ-2024/3-1» ծածկագրով գնման գործընթացի հետ կապված իր տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները:
3. Որոշումն անհապաղ ուղարկել լիազորված մարմնին՝ ՀՀ ֆինանսների նախարարությանը:
4. Որոշումը ուժի մեջ է մտնում կայացման պահից:

Դատավոր՝ Ռուբեն Բունիաթյան Digitally signed by BUNIATYAN RUBEN 1312740051
Date: 2024.10.07 20:30:46 AMT

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am